ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԱԲԴԵԼ ՖԱԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019) 7-17

Արամ Գասպարյան
ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.) 18-30

Տաթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵՁՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ (2016, 2020 ԹԹ.). ԴԻՄԿՈՒՐՄՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ 31-49

Արմինե Հակոբյան
ԱԲՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՑԵՊՏԸ 50-65

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ
ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 66-78

Խադիջե Ահմադ Մեհրաբի
ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՏՈՒՄ 79-86

Իրանագիտություն

Անուշ Ստամբոլցյան
ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱՂԻՀ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 87-97

Ալեն Հայրապետյանց
ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԲԱՅԱՁԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԽՈՐՀՈՒՐԴ» 98-110

Նունիկ Դարբինյան
ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՋ 111-133

Տիգրան Չանդոյան
ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 134-144

Թյուրքագիտություն

Կուրապյ Ուրազաևա, Վերոնիկա Ռազումովսկայա, Ալեքսանդր Սաֆարյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 145-166

Արշակ Գևորգյան
ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ 167-186

Մարգարիտա Կրտիկաշյան
ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ 187-200

Սամվել Ռամազյան *
ԵՎՐՈՊԱՅՈՒ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ 201-223

Անի Ոսկանյան
ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 224-238

***

Ռուսլան Ցականյան
ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ, ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ) 239-247

Հովհաննես Խորիկյան
ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ 248-261

CONTENT

Arabic Studies

Gor Gevorgyan
EGYPT`S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI 7-17

Aram Gasparyan
ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF NATIONAL IDENTITY (1962-1999) 18-30

Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan
COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS 31-49

Armine Hakobyan
COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA" 50-65

Mohammed Haj Ibrahim
THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT 66-78

Khadije Ahmad Mehrabi
THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES IN THE TEXT OF THE QUR'AN 79-86

Iranian Studies

Anush Stamboltsyan
THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH" DOCTRINE 87-97

Alen Hayrapetyanc
THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION: "BLESSING OR ADVICE?" 98-110

Noonik Darbinian
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY TALES AND FOLKLORE 111-133

Tigran Candoyan
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH NATIONALISM IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF TURKEY 134-144

TurkicStudies

Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE TRANSLATIONS INTO ARMENIAN 145-166

Arshak Gevorgyan
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE: THE TURKISH DEEP STATE 167-186

Margarita Krtikashyan
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN THE TURKISH MUSIC SCENE 187-200

Samvel Ramazyan
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK) IN ARMENIAN AND TURKIC EPICS 201-223

Ani Voskanyan
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT, ADANA PROVINCE 224-238

***

Ruslan Tsakanyan
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY (EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW, ULTRA-LOW DATES) 239-247

Hovhannes Khorikyan
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA IN ACHAEMENID PERSIA 248-261

Արամ Գասպարյան[1]

ԱԼՃԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.)

Բանալի բառեր՝ *Ալժիր, բերբերներ, ազգային ինքնություն, շարժում, պայքար, իսլամիստներ, ճգնաժամ:*

Ալժիրի անկախության նվաճումը[2] հնարավորություն ընձեռեց բերբերներին[3] արդարացի լուծում պահանջել տարիներ շարունակ անտեսված և կուտակված խնդիրների համար: Լինելով Ալժիրի ամենամեծաթիվ էթնիկ խումբը[4], որն ուներ իր առանձին լեզուն, մշակույթն ու սովորույթները, բերբերները պահանջում էին պատշաճ վերաբերմունք ցուցաբերել և ճանաչել իրենց ազգային իրավունքները: Բերբերների ինքնության շարժումը, երկրում տեղի ունեցող քաղաքական զարգացումներին զուգահեռ ևս ենթարկվում էր փոփոխությունների: Նորանկախ պետության մեջ բազմաթիվ սոցիալական, տնտեսական խնդիրների առկայությունը և իշխանությունների անկարողությունը զգալի հետևանքներ

[1] Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, արաբական երկրների բաժին, առաջատար գիտաշխատող: էլ. փոստ mmcsar@gmail.com

[2] Ալժիրն անկախացավ 1962 թ.

[3] Գիտնականների մեծ մասը լատիներեն «բարբարոս» («barbarus») անվան հետ են կապում հյուսիսաֆրիկյան այս էթնոսի անվանումը՝ բերբերներ: Ի դեպ բերբերները չեն ընդունում այդ անվանումը. Իրենք իրենց անվանում են ամազիգներ (ազատ մարդիկ)

[4] Բերբերների ընդհանուր թիվը ներկայումս կազմում է մոտ 20 միլիոն մարդ, իսկ նրանց բնակության ամենակոմպակտ վայրերը Մաղրիբի երկրներն են: Բերբերների մեծ մասն ապրում է Մարոկկոյում՝ մոտ 8 միլիոն, Ալժիրում՝ ավելի քան 2 միլիոն, Լիբիայում՝ ավելի քան 300 հազար, Թունիսում՝ ավելի քան 100 հազար, իսկ Մավրիտանիայում՝ մի քանի տասնյակ հազար: Շուրջ 1,2 միլիոն բերբեր ապրում է Ֆրանսիայում: Сапронова М., Проблема политизации этнического фактора в современном Алжире, Национализм и фундаментализм на Ближнем Востоке, материалы конференции, М., Типография ГНЦ РФ «НИОПИК», 1999, ст. 91-92.

ունեցան երկրի ներքին կայունության վրա: Սոցիալ-տնտեսական ծանր վիճակը հանգեցրեց քաղաքական ճգնաժամի և զինված հակամարտության ընդդիմադիրների և իշխանության միջև, ինչն անմիջական ազդեցություն ունեցավ նաև բերբերների վրա, որոնք ևս ներքաշվեցին այդ հակամարտության մեջ: Քաղաքացիական ճգնաժամի տարիները, փաստորեն, հենց այն ժամանականակահատվածն է, երբ ձևավորվեցին բերբերների հիմնական պահանջները:

Արաբների կողմից Հյուսիսային Աֆրիկայի գրավումից հետո սկսվեց բերբերների ձուլումն իսլամի, արաբերենի, արաբական մշակույթի տարածման և ներդրման, ինչպես նաև նրանց տեղահանման և առավել մեկուսացված վայրերում վերաբնակեցման միջոցով:[5] Ի հետևանք՝ բերբերները իսլամականացվեցին և որոշ չափով արաբացան, այսուհանդերձ, բերբերներին հաջողվեց պահպանել ոչ միայն իրենց լեզուն, այլ նաև մշակույթն ու սովորույթները:

Բերբերների քաղաքական պայքարի սկիզբը

Ալժիրի անկախության ձեռքբերումից հետո երկրի նոր ղեկավարները՝ ի դեմս «Ազգային ազատագրական ճակատի»[6] (ԱԱՃ), կանգնեցին բազմաթիվ ներքին և արտաքին, այդ թվում նաև բերբերական խնդրի առջև: ԱԱՃ-ի համար առավել անհանգստացնող էր հենց բերբերների հարցը, քանի որ վերջիններիս համոզմամբ բերբերական գործոնը կարող էր երկրի պառակտման պատճառ հանդիսանալ:

[5] Бабкин С., О Положении во всемирном конгрессе амазиг, Ближний Восток и современность. Сборник статей М., 2001, Типография ЗАО «АСТИ, ст. 31.

[6] «Ազգային ազատագրական ճակատը» ստեղծվել է 1954 թվականի նոյեմբերի 1-ին մի քանի փոքր քաղաքական խմբերի միաձուլման արդյունքում՝ որպես համազգային կազմակերպություն, որը գլխավորում էր Ալժիրի զինված պայքարը անկախության համար:

Անհրաժեշտ է նշել, որ բերբերները մեծ ներդրում են ունեցել ազատագրական պատերազմի ընթացքում (1954-1962 թթ.):[7] Բերբերների բնակության հիմնական շրջաններ Կաբիլիայում և Արեսի լեռներում էին տեղի ունենում ամենաթեժ մարտերը ֆրանսիական զորքերի և ալժիրցի պարտիզանների միջև, որոնց մեծամասնությունը բերբերներ էին: Բացի այդ մի շարք հեղինակավոր բերբեր գործիչներ կարևոր դեր են խաղացել ԱԱՃ-ի վերջնական հաղթանակի գործում: [8]

Բերբերներն արդարացիորեն ակնկալում էին, որ անկախության նվաճումից հետո նոր իշխանությունները կճանաչեն իրենց իրավունքները: Հատկանշական է, որ սկզբնական շրջանում բերբեր մտավորականները լայնորեն ներգրավված էին պետական և կրթական համակարգում: Սակայն Ալժիրի իշխանությունների՝ արաբական այլ երկրների հետ մերձեցմանը և արաբականացման գաղափարախոսության տարածմանը զուգահեռ սկսեցին անտեսվել նաև բերբերների խնդիրները:[9] Այս առումով առավել ուշագրավ է Ալժիրի առաջին նախագահ Ահմեդ Բեն Բելլայի[10] դիրքորոշումը: Վերջինս, իր

[7] Մանրամասն տես՝ Ruedy J., Modern Algeria: The Origins and Development of a Nation, Second Edition, Bloomington, Indiana University Press, 2005, p. 156-195.

[8] Миронова Е., Алжир: Проблема берберского меньшиства, Ближний Восток и современность. Сборник статей (выпуск шестнадцатый), М., 2002, ст. 318.

[9] Ալժիրի գաղութային ժամանակաշրջանում Ֆրանսիան հավատարիմ մնալով իր քաղաքականությանը, նպատակահարմար էր համարում Ալժիրի բերբերներին հեռացնել արաբ բնակչությունից՝ ստեղծելով անջրպետ երկու ժողովուրդների միջև: Այդ նպատակով 20-րդ դարի 20-ական թթ. Ալժիրում հիմնվեցին ֆրանսաբերբերյան դպրոցներ՝ ի հակադրումն արաբաիսլամական կրթությանը: Ֆրանսիական կրթությունը և արտագաղթը Ֆրանսիա հնարավորություն ընձեռեց բերբերներին ստանալ ժամանակակից կրթություն, ինչը վերջիններին, փաստորեն, դարձրել էր ամենակրթված սոցիալական խավը: Сапронова М., նշվ. Աշխ., էջ 95:

[10] Ալժիրի նախագահ է եղել 1963-1965 թթ.:

ելույթներից մեկում դիմելով ալժիրցիներին՝ հայտարարեց,- «Մենք բոլորս արաբ ենք», - ասաց նա, - «Եվ դա այդպես պետք է լինի»:[11]

Երկիրը հնարավոր ներքին ցնցումներից ապահովելու նպատակով «Ազգային ազատագրական ճակատը» առաջ քաշեց ազգային միավորման գաղափարը, ինչը, փաստորեն, ենթադրում էր երկրի ամբողջական արաբացում՝ անտեսելով գոյություն ունեցող այլ էթնիկ խմբերի իրավունքները. գաղափարախոսություն, որը **պարտադրում էր** մեկ ժողովրդի ձևավորում: Հարկ ենք համարում նշել, որ այս քաղաքականությունը որոշակի չափով արդարացված էր, քանի որ Ֆրանսիայի երկարամյա գաղութային քաղաքականության և ֆրանսերենի, ինչպես նաև ֆրանսիական մշակույթի ներդրման հետևանքով Ալժիրում այդպես էլ վերջնական ձևավորում չէր ստացել միասնական ազգի գաղափարը:

ԱԱՃ-ի ազգային միասնության գաղափարախոսությունը դժգոհություն առաջացրեց բերբեր քաղաքական գործիչների մոտ, որոնք կտրականապես դեմ արտահայտվեցին նման քաղաքականությանը: Բերբեր գործիչների դիրքորոշումն ԱԱՃ-ի կողմից ընկալեց որպես հակապետական և պառակտիչ: Երկրի իշխանությունները, չցանկանալով գնալ որևէ փոխզիջման, ճնշումների ենթարկեցին բերբեր ակտիվիստներին և ձերբակալեցին նրանց ղեկավարներին՝ սկիզբ դնելով անհանդուրժողականության գործընթացին և ուժի դիրքից քաղաքականությանը:

Այս համատեքստում տեղին է մեջբերել Ֆարես Ուալիդի[12] գրքում տեղ գտած Վաշինգտոնում կաբիլների ներկայացուցիչ Ալեքս Մեդունիի հետևյալ խոսքերը. «Ազգային Ազատագրական

[11] Fisk R., Robert Fisk on Algeria 1992-2013: Two Decades of Reportage on a Tragic Conflict That the West Can No Longer Afford to Ignore. Create Space Independent Publishing Platform, 2014, p. 188

[12] Լիբանանյան ծագումով ամերիկյան քաղաքական գործիչ, իրավաբան:

Ճակատի» կողմից արաբերենի և արաբական մշակույթի տարածումը կաբիլների շրջանում ազգային փոքրամասնությունների կողմից ընկալվում է որպես էթնիկ զտում: Կաբիլներն անկախության առաջին օրերից արդեն երեք տասնամյակ է, ինչ մշտական ճնշման են ենթարկվում առաջին հերթին պանարաբականների և Ալժիրի սոցիալիստական վերնախավի կողմից: Երբ «սառը պատերազմից» հետո ռազմական ռեժիմը փոխարինվեց այլ արաբ ազգայնականներով, ինչպես նաև իսլամիստ-սալաֆիներով, ճնշումները շարունակվեցին: Կաբիլները ֆրանսիացիների հեռանալուց հետո ազատ շունչ քաշելու ոչ մի հնարավորություն չունեցան, չնայած այն հանգամանքին, որ ազատագրական պատերազմի ժամանակ նրանք առաջին շարքերում էին»:[13]

Այսպիսով, Ալժիրում առաջ եկավ մի խնդիր, որը մինչև օրս ամբողջական լուծում չի ստացել;

«Բերբերական գարուն»

Ալժիրի նորագույն պատմության մեջ բերբերների առաջին քաղաքական հակակառավարական բողոքը կարելի է համարել 1980 թ. մարտ-ապրիլ ամիսների իրադարձությունները, ինչն առավել հայտնի է որպես «Բերբերական գարուն»:

«Բերբերական գարունը» սկիզբ առավ ուսանողների բողոքի ելույթներից, որոնք դժգոհության ձայն բարձրացրին կենտրոնական իշխանությունների կողմից հայտնի կաբիլ բանաստեղծ Մուլուդ Մամերի դասախոսության չեղարկման պատճառով: Կարճ ժամանակում Տիզի Ուզույում[14] սկսված

[13] Phares W., The Coming Revolution: Struggle for Freedom in the Middle East, New York, Threshold Editions, 2010, p. 305.
[14] Կղաբիլիայի շրջկենտրոն:

ուսանողական ըմբոստություն վերածվեց զանգվածային գործադուլի և հակակառավարական ելույթների ողջ Կաբիլայում:[15]

Բերբերները իշխանությունների այս քայլը որակեցին որպես արաբացման դրսևորում և իրենց՝ ազգային մշակույթի սահմանափակման հերթական փորձ՝ պահանջելով հարգել բերբերների մշակույթը և պաշտոնապես ճանաչել բերբերերենը (թամազիգ): Սակայն կենտրոնական իշխանությունները ոչ միայն անտեսեցին բերբերների պահանջները, այլև դիմեցին ուժի: Ապրիլի 20-ին ոստիկանությունը հատուկ գործողություն իրականացրեց գործադուլ հայտարարած հիմնարկներում հավաքված ցուցարարների դեմ: Ըստ տեղեկությունների՝ բերբերների և ոստիկանության բախումների հետևանքով զոհվեց 30-50 և վիրավորվեց՝ շուրջ 100 մարդ:[16] Սակայն Բ. Վեյթսմանի պնդմամբ «գոյություն չունի որևէ փաստ, որևէ զոհի վերաբերյալ»:[17] Այսուհանդերձ, իշխանությունները գործադուլները ճնշելուց հետո արգելեցին ցանկացած մշակութային միջոցառում և ձերբակալեցին 24 մարդու[18]:

Ալժիրի անկախության ձեռքբերումից հետո այս շարժումն առաջին էր, որը դեմ դուրս եկավ «Ազգային ազատագրական ճակատին» և նրա գլխավորած կառավարությանը: «Բերբերական գարունը», իրավամբ, ամենակարևոր իրադարձություններից էր բերբերների շարժման ձևավորման գործում: Հենց այս ժամանակ առաջին անգամ բարձրաձայնվեց թամազիգին պաշտոնական լեզվի կարգավիճակ տալու պահանջը:

[15] Weitzman B., Amazigh Politics in the Wake of the Arab Spring: University of Texas Press, Austin 2022, p. 25.
[16] Weitzman B., The Berber Identity Movement and the Challenge to North African States, University of Texas Press, Austin, 2011, p 80.
[17] Weitzman B., The Berber Identity Movement, նշվ.աշխ., էջ 80:
[18] Taieb S., Decolonizing Indigenous: Education An Amazigh/Berber Ethnographic Journey, Palgrave Macmillan publisher, New York, 2014, p. 22.

«Բերբերական գարունը» խթանեց Կաբիլիայում «Բերբերական մշակութային շարժում» (ԲՄՇ) ընդհատակյա կազմակերպության հիմնումը, որի գլխավոր նպատակը բերբերների ինքնության և լեզվի ճանաչումն էր: Ժամանակի ընթացքում ԲՄՇ-ն լայն տարածում գտավ ոչ միայն Կաբիլիայի շրջանում, այլ նաև Ալժիրի այլ բերբերաբնակ վայրերում: Այն կարևոր դեր խաղաց ոչ միայն բեբերների պահանջների տարածման գործում, այլև հիմք հանդիսացավ ավելի ուշ ստեղծված կուսակցությունների համար[19]:

Բերբերները «Ալժիրյան ճգնաժամի» տարիներին

1980-ական թթ. Ալժիրը հայտնվեց տնտեսական ճգնաժամի մեջ: Կառավարության տնտեսական քաղաքականությունը հանգեցրեց գների, գործազրկության կտրուկ աճի և ազգաբնակչության ընդհանուր կենսամակարդակի նվազման, ինչն առավել ուժեղ հարվածեց Ալժիրի անապահով խավերին: Այս ամենը, ինչպես նաև իշխանությունների անգործությունը բացասական ազդեցություն ունեցան ԱԱՃ-ի հեղինակության վրա, հանգեցրին ընդդիմադիր շարժման ակտիվացմանը և երկրում իսլամական գաղափարախոսությունների տարածմանը: Ալժիրում սկսվեցին հակակառավարական բողոքի ելույթներ, որոնք իրենց գագաթնակետին հասան 1988 թ. Ալժիրում տեղի ունեցած ժողովրդական ընդվզման ժամանակ:[20] Երկիրը հայտնվեց քաղաքական ճգնաժամի առջև, ինչն էլ պարտադրեց իշխանություններին գնալ զիջումների:

[19] Liverani A, Civil Society in Algeria, The Political Functions of Associational Life, New York, 2008, p. 17.
[20] Mac Queen B., Political Culture and Conflict Resolution in the Arab World, Lebanon and Algeria, Melbourne University Press, 2009, p. 94.

1989 թվականին ընդունված նոր Սահմանադրությունը[21] ճանապարհ հարթեց բազմակուսակցական համակարգի համար, անմիջապես առաջացան երկու բերբերական կուսակցություններ: 1989 թ. Սաիդ Սաիդիի կողմից «Բերբերական մշակութային շարժում» կազմակերպության հիմքի վրա ստեղծվեց «Միավորում մշակույթի և ժողովրդավարության համար» (ՄՄԺ) կուսակցությունը: Այն հիմնադրվեց որպես ընդդիմադիր բերբերական կուսակցություն, որի հիմնական նպատակը բերբերերենի և բերբերական մշակույթի ճանաչումն էր, ինչպես նաև մարդու իրավունքների և ժողովրդավարության պաշտպանությունը:[22]

Ալժիրի բերբերների շահերը պաշտպանող երկրորդ կուսակցությունը «Սոցիալական ուժերի ճակատը» (ՍՈՒՃ) որն ստեղծվել էր դեռևս 1963 թ. Հոսին Այթ Ահմեդի և Մոհանդ Ուլ Լհաջի կողմից՝ բերբերների քաղաքական և քաղաքացիական շահերը պաշտպանելու համար դուրս եկավ ընդհատակից 1989 թ.: ՍՈՒՃ-ի ծրագային կետերում կարևոր տեղ էր հատկացվում բերբերաբնակ շրջանների ինքնավարության ընդլայնմանը և պետական համակարգում բերբերների ներգրավմանը:[23]

Ժողովրդավարական համակարգի ներդրումը որոշակիորեն փոխեց նաև բերբերների կարգավիճակը: Տիզի Ուզույում սկսեց գործել Բերբերների հետազոտությունների ինստիտուտը, նախագահին կից հիմնվեց ամազիգների խնդիրներով զբաղվող հատուկ ներկայացուցչություն: Բացի այդ, բերբերներով բնակեցված շրջանների որոշ դպրոցներում սկսեցին դասավանդել

[21] Willis M., Politics and Power in the Maghreb: Algeria, Tunisia and Morocco from Independence to the Arab Spring, Oxford University Press, 2014, p. 101.
[22] Ilahiane H., Historical dictionary of the Berbers (Imazighen), (Historical dictionaries of peoples and cultures; no.5), Maryland, Scarecrow Press, Inc., 2006, p. 103-104.
[23] 1997 թ. տեղի ունեցած առաջին բազմակուսակցական ընտրություններում «Սոցիալական ուժերի ճակատը» խորհրդարանում զբաղեցրեց 20 տեղ՝ 380-ից: Նույն տեղում էջ 40:

թամազիգով, ալժիրյան հեռուստաընկերությունում հայտնվեցին թամազիգով լուրեր, ակտիվ գործունեություն սկսեցին ծավալել բազմաթիվ բերբեր սոցիալ-մշակութային կազմակերպություններ[24]:

Սակայն վերոնշյալ ժամանակաշրջանը կարճ տևեց: 1992 թ. Ալժիրը կանգնեց նոր մարտահրավերների առջև: Երկրում սկսված զինված հակամարտությունը «Իսլամական փրկության ճակատի»[25] (ԻՓՃ) և իշխանությունների միջև անմասն չթողեց նաև բերբերներին: Թիրախավորելով բերբերների ամենակարկառուն ներկայացուցիչներին՝ իսլամիստ գրոհայինները 1993 թ. սպանեցին կաբիլիացի՝ բերբերների իրավունքների պաշտպան, գրող-հրապարակախոս Թահար Ջաութին[26]: Կաբիլիայում դրությունը սրվեց 1994 թ., երբ ծայրահեղական «Իսլամական բանակ խմբավորումը» (ԻԲԽ) առևանգեց բերբեր հայտնի և սիրված ժողովրդական երգիչ Մատուբ Լունեսին[27]: Հարյուր հազարավոր կաբիլներ դուրս եկան Տիզի Ուզույի փողոցներ՝ պահանջելով անմիջապես ազատ արձակել երգչին՝ սպառնալով «la guerre total»[28] սկսել, եթե նրան վնասեն: Տեղի տալով բերբերների սպառնալիքներին՝ ԻԲԽ-ն ազատ արձակեց Մատուբ Լունեսին:[29] Այսուհանդերձ, իսլամիստ ծայրահեղականները չհրաժարվեցին իրենց ծրագրերից: Մի քանի տարի անց՝ 1998 թ., նրանք ի վերջո

[24] Сергеев М., Берберы Северной Африки: прошлое и настоящее, М, Типография ЗАО «Асти-Издат», 2003, ст. 62.

[25] Իսլամական Փրկության ճակատը հիմնադրվել է 1989 թ.: Игнатенко А., Ислам и политика: Институт религии и политики, Москва, 2004. ст 68.

[26] Le Sueur J., Algeria since 1989: Between terror and democracy, Fernwood Publishing Ltd, Canada 2010.

[27] Հանրաճանաչ երգիչը մեծ համբավ է վայելում ոչ միայն բեմում իր ելույթներով, որոնք գրավում էին հազարավոր մարդկանց, այլ նաև իր ակտիվ քաղաքական պայքարով ալժիրի բերբերների ազգային և մշակութային իրավունքների համար: Նրա երազանքը Ալժիրում դաշնային պետության ստեղծումն էր, որտեղ Կղաբիլիան կունենա լայն մշակութային և քաղաքական ինքնավարություն:

[28] Թարգմանաբար՝ համընդհանուր պատերազմ:

[29] Weitzman B, The Berber Identity Movement, նշվ.աշխ., էջ 111:

սպանեցին Մատուբ Լունեսին, ինչից հետո Կաբիլիայում լարվածությունը հասավ գագաթնակետին:

Տիզի Ուզույում տեղի ունեցան աննախադեպ հուժկու բողոքի ցույցեր ու խռովություններ, որոնք շատ կարճ ժամանակահատվածում տարածվեցին ողջ Կաբիլիայում: Չնայած այն հանգամանքին, որ Մատուբ Լունեսին սպանել էին իսլամիստները, Կաբիլիայի բեչբերներն իրենց ողջ զայրույթն ուղղեցին պետական կառույցների դեմ՝[30] մեղադրելով կառավարությանը մարդասպանների հետ համագործակցության մեջ: Ի հետևանք՝ Կաբիալիան այս ժամանակաշրջանում վերածվեց պայքարի յուրահատուկ կենտրոնի: Բերբերները մի կողմից պայքարում էին իրենց ազգային և մշակութային իրավունքների համար, իսկ մյուս կողմից՝ արմատական իսլամիստների դեմ:

Բերբերների և իշխանությունների միջև հակասությունները նոր թափ ստացան 1998 թ. ամռանը, երբ ուժի մեջ մտավ արաբերենի ընդհանուր կիրառման օրենքը, որը նախատեսում էր արաբերենի պարտադիր օգտագործումը ոչ միայն պետական համակարգում, այլև քաղաքական, հանրային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:[31] Հարկ է նշել, որ օրենքի ընդունումը ծայրահեղ բացասաբար ընկալվեց ոչ միայն տարբեր բերբերական կազմակերպությունների, այլև բերբեր բնակչության կողմից: Տիզի Ուզույում կրկին սկսվեցին զանգվածային ելույթներ, որոնց ընթացքում բերբերները հարձակվեցին պետական հաստատությունների վրա՝ «Ալժիրում չի լինի խաղաղություն առանց բերբերերենի», «արաբական իսլամիզմը ուղիղ ճանապարհ է դեպի դժոխք» կարգախոսների ներքո:[32]

[30] Volpi F., Islam and Democracy: The Failure of Dialogue in Algeria, Pluto Press, London 2003, p. 104.
[31] Сапронова М., նշվ. աշխ., էջ 99:
[32] Նույն տեղում:

Ստեղծված իրադրության պայմաններում՝ բերբերներին հանդարտեցնելու համար կենտրոնական իշխանությունները ստիպված էին գնալ որոշ զիջումների և մի շարք քայլեր ձեռնարկեցին թամազիգի զարգացման համար: Մասնավորապես հայտարարվեց Ալժիրի դպրոցներում բերբերերենի ուսուցման շրջանակների ընդլայնման մասին: Բացի այդ, որոշվեց Ազգային հետազոտությունների ինստիտուտին կից հիմնադրել թամազիգի և բերբերական մշակույթի ուսումնասիրության կենտրոն, ստեղծել բերբերերենի բառարան և այլն:[33]

Չնայած իշխանություններն անցկացրին որոշակի բարեփոխումներ, դա դեռևս, ամենևին էլ չէր նշանակում, որ վերջիններս վերանայելու էին երկրի ընդհանուր արաբացման իրենց ծրագիրը: Ավելին, երկրի ղեկավարները չէին պատրաստվում իրականացնել ավելի հիմնարար բարեփոխումներ, ինչպիսին էր, օրինակ, թամազիգի ճանաչումը որպես պաշտոնական լեզու:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ Ալժիրի անկախության ձեռքբերումից հետո բերբերների ազգային ինքնության համար սկսված շարժումը՝ չնայած բազմաթիվ խոչընդոտների, ունեցավ իր դրական արդյունքները: 1996 թ. ընդունված սահմանադրության մեջ արաբները, բերբերները և իսլամն անվանվեցին «Ալժիրի ազգային ինքնության» հիմնական բաղադրիչներ[34]: Պայքարի զարգացմանն ու տարածման զուգընթաց փոփոխության ենթարկվեցին նաև բերբերների առաջ քաշած պահանջները: Եթե անկախության առաջին տարիներին բերբերները սահմանափակվում էին ինքնության ճանաչման պահանջով, ապա արդեն 2000-ական. թթ. սկզբին վերջիններիս կողմից առաջ քաշվեցին առավել արմատական պահանջներ, այդ թվում՝

[33] Сергеев М, նշվ. աշխ., էջ 72:
[34] Weitzman B., The Berber Identity Movement նշվ. աշխ., էջ 114:

Կաբիլիային ինքնավարություն տրամադրում: Անհրաժեշտ է նշել, որ Ալժիրի բերբերների պայքարի արմատականացումն ու երբեմն նույնիսկ ծայրահեղական դիրքորոշումը, պայմանավորված էր ոչ միայն հենց բերբերների քաղաքական ձգտումներով, այլև իշխանությունների վարած Ալժիրի արաբականացման քաղաքականությամբ: 1989 թ. հետո երկրում իսլամական գաղափարախոսությունների կտրուկ տարածման և ամրապնդման հետևանքով ձևավորված նոր քաղաքական իրավիճակը ևս բացասական ազդեցություն ունեցավ բերբերների վրա: Բերբերները, լինելով աշխարհիկ պետության կողմնակից, բնականաբար, դեմ էին ԻՓՃ-ի գաղափարախոսությանը և երկրի վերածմանը կրոնապետության, ինչը բերբերներին արդեն իսկ դասում էր ծայրահեղ իսլամիստների թշնամիների շարքին: Միևնույն ժամանակ մեր կարծիքով բերբերների դեմ իրականացրած ահաբեկչական գործողություններն, ունեին մեկ այլ նպատակ ևս. այն էր՝ անկարգություններ հրահրել բերբերաբնակ վայրերում և այդպիսով շեղել Ալժիրի ղեկավարության Պետք է նշել նաև, որ թե՛ արաբ ազգայնականները, և թե՛ իսլամական քաղաքական գործիչները, ելնելով իրենց քաղաքական համոզմունքներից, չեն ընդունում բերբերների ոչ միայն ինքնորոշման իրավունքը, այլ նաև կտրականապես դեմ են բերբերաբնակ շրջանների ինքնավարությանը և նույնիսկ տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծմանը :

ДВИЖЕНИЕ ЗА СОХРАНЕНИЕ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ АЛЖИРСКИХ БЕРБЕРОВ (1962-1999)

Арам Гаспарян

(Резюме)

Достижение Алжиром независимости предоставило берберам возможность потребовать справедливого решения множества проблем, которые игнорировались и накапливались годами. Будучи

крупнейшей этнической группой в Алжире со своим особым языком, культурой и обычаями, а также национальной и этнической самостоятельностью и особенностью, берберы требовали надлежащего обращения и признания их национальных прав. Борьба берберов за сохранение идентичности претерпевало изменения вместе с политическими событиями, происходящими в стране. Наличие множества геополитических проблем в новом независимом государстве и некомпетентность и бездействия властей имели серьезные последствия для внутренней стабильности страны. Сложная социально-экономическая ситуация привела к политическому кризису и вооруженному конфликту между оппозицией и властью, что оказало непосредственное влияние на берберов, которые поневоле были втянуты в конфликт. Годы гражданского кризиса — это, по сути, период, когда оформились основные требования берберов.

ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF NATIONAL IDENTITY (1962-1999)

Aram Gasparyan

(Summary)

Algeria's independence provided the Berbers with an opportunity to demand a fair solution to a lot of problems that had been ignored and accumulated over the years. As the largest ethnic group in Algeria, with its own language, culture and customs, the Berbers demanded a appropriate treatment and recognition of their national rights. The struggle of the Berbers to preserve their identity has been changing along with the political events taking place in the country. The existence of many social and economic problems in the newly independent state and the incompetence of the authorities had significant consequences on the internal stability of the country. The difficult socio-economic situation led to a political crisis and an armed conflict between the opposition and the government, which had a direct impact on the Berbers, who were also draged into the conflict. The years of the civil crisis are, in fact, the period when the main demands of the Berbers formed.